

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 08.12.2010

Հոդված 1. «Պարտադիր սոցիալական ապահովության վնարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-179 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Այս դեպքում վարձու աշխատողների վնարած սոցիալական վնարները համարվում են նաև իրենց հաշվարկած սոցիալական վնարներ, որոնք կարող են հետևել սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված տեղեկությունները գործատուից ստանալուց հետո:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով՝

«Մինչև հաշվետու տարին ավարտվելը գործունեությունը (եկամուտի աղբյուրի) դադարեցնելու եւ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր է տարեկան եկամուտների մասին հայտարարագիրը ներկայացնել եւ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հանձնել լիազոր մարմին ոչ ուշ, քան մեկնելուց մեկ ամիս առաջ: Հայտարարագրով հաշվարկված սոցիալական վնարի գումարը վնարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ վնարման վերջնահաշվարկը կատարելուց հետո՝ 5-օրյա ժամկետում:»:

2) 4-րդ մասում՝

ա. առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործատուները հաշվետու եռամսյակի համար լիազորված մարմին են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ձևով սոցիալական վնարների եռամսյակային հաշվետվություն (ամսական կտրվածքով)՝ մինչև այդ եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 20-ը (ներառյալ):»:

բ. երկրորդ նախադասությունը ուժը կորցրած հանաչել.

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Լիազոր մարմին ներկայացրած տեղեկության մեջ հետագայում սխալներ հայտնաբերելու դեպքում գործատուն լիազոր մարմին կարող է ներկայացնել հետված տեղեկություն:»:

3) 6-րդ մասում՝

ա. երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ապահովագիրների՝ լիազոր մարմին ներկայացվող հաշվետվությունը (հայտարարագիրը) սույն օրենքով սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշացնելու կամ չներկայացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար ապահովագրից գանձվում է տուգանք (նաև ստուգման ակտով)՝ վնարման ենթակա սոցիալական վնարի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով: Նշված տուգանքների հանրագումարը չպետք է գերազանցի այդ սոցիալական վնարի՝ օրենքով սահմանված վնարման ժամկետին չվնարված գումարը, իսկ 15-օրյա ժամկետը հաշվարկելիս ոչ աշխատանքային օրերը հաշվի են առնվում միայն առաջին տուգանքի հաշվարկման ժամանակ: Նշված տուգանքի հաշվարկումը դադարում է սոցիալական վնարի հաշվետվությունը (հայտարարագիրը) լիազոր մարմին ներկայացնելու պահից կամ սոցիալական վնարների գծով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների հետադարձումը ստուգումը ներառող ստուգման ավարտից:»:

բ. հինգերորդ պարբերության երկրորդ նախադասությունը ուժը կորցրած հանաչել.

4) 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Ստուգման ակտով առաջադրված սոցիալական վնասի գումարների նկատմամբ նշված 10-օրյա ժամկետում սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված տույժերը չեն հաշվարկվում: Այդ ժամկետը լրանալուց հետո ստուգման ակտով առաջադրված սոցիալական վնասի գումարների չվճարման կամ մասնակի վճարման դեպքում սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված տույժերի հաշվարկի վերսկսման ժամանակ նշված 10-օրյա ժամկետը հաշվի չի առնվում:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ հոդվածով`

«Հոդված 6.1. Սոցիալական վնասների պարտավորությունների հաշվառումը

1. Սոցիալական վնասների պարտավորությունների հաշվառման համար լիազոր մարմնում բացվում են անձնական հաշվի ֆարտեր: Անձնական հաշվի ֆարտի ձևը եւ վարման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

2. Սոցիալական վնասների պարտավորությունները եւ դրանց մարումները (վճարումը, հաշվանցումը), ինչպես նաեւ սոցիալական վնասների պարտավորություններից ավելի վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լումաների): Լիազոր մարմին ներկայացվող հայտարարագրերում, հաշվետվություններում, տեղեկություններում եւ այլ փաստաթղթերում, ինչպես նաեւ հարկային մարմնի կողմից տրվող տեղեկանքներում եւ այլ փաստաթղթերում սոցիալական վնասների պարտավորությունների եւ հաշվանցվող գումարների հաշվառման համար որպես չափման միավոր ընդունվում է դրամը (առանց լումաների): Ապահովադրի լուծարման դեպքում սոցիալական վնասների մինչև հարյուր դրամ ընդհանուր պարտավորությունները եւ գերավնասներն անտեսվում են:

3. Սոցիալական վնասների պարտավորությունները (այդ թվում` անհատ ձեռնարկատերերի նվազագույն ամսական գումարները) հաշվառվում են օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետով (այսինքն` տվյալ սոցիալական վնասի պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)` անկախ հայտարարագրերի (հաշվետվությունների) ներկայացման ամսաթվից:

4. Որեւէ հաշվետու ժամանակաշրջան (ամիս, եռամսյակ, տարի) սկսվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի առաջին ամսվա 1-ից (նոր ստեղծված ապահովադրի համար` պետական գրանցման պահից) եւ ավարտվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա վերջին օրով: Լիազոր մարմին հայտարարագրերը (հաշվետվությունները) ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո (բացառությամբ ապահովադրի լուծարման կամ ֆիզիկական անձի` Հայաստանի Հանրապետությանից մեկնելու դեպքերի): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանի հայտարարագրերի (հաշվետվությունների) ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետների վերջին օրը ներկայացված մեկից ավելի հայտարարագրերից (հաշվետվություններից) առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հայտարարագիր (հաշվետվություն), իսկ մյուսները` նշված հայտարարագիր (հաշվետվություն):

5. Ապահովադրի լուծարման դեպքում մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը լիազոր մարմին ներկայացված միջանկյալ եւ լուծարային հայտարարագրերը (հաշվետվությունները) համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հայտարարագրեր (հաշվետվություններ), եթե այդ հայտարարագրերը (հաշվետվությունները) ներկայացնելուց հետո մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը ապահովադիրը որեւէ գործարք կամ գործառնություն չի կատարել: Ապահովադրի` միջանկյալ եւ (կամ) լուծարային հայտարարագրերը (հաշվետվությունները) ներկայացնելուց հետո մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը որեւէ գործարք կամ գործառնություն իրականացնելու դեպքում տվյալ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվում են հայտարարագրեր (հաշվետվություններ), որոնք չեն համարվում նշված հայտարարագրեր (հաշվետվություններ):

6. Ֆիզիկական անձի՝ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը լիազոր մարմին ներկայացվող հայտարարագրերը (հաշվետվությունները) համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հայտարարագրեր (հաշվետվություններ), եւ հաշվետու ժամանակաշրջանների ավարտից հետո այդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվող հայտարարագրերը (հաշվետվությունները) համարվում են հետված հայտարարագրեր (հաշվետվություններ):»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությունում «սոցիալական վնասների պարտավորության գումարները նվազեցնող կամ հաշվանցվող գումարներն ավելացնող» բառերը փոխարինել «սոցիալական վնասների պարտավորության գումարները կամ հաշվանցվող գումարները փոփոխող» բառերով:

Հոդված 5. Օրենքի հավելված 1-ում՝

1) 3-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.3-րդ կետով.

«3.3. Ժամանակագրական կարգի կիրառման ժամանակ, ապահովադրի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կատարված փաստացի վնասումների կամ հաշվանցումների հաշվին, եթե ապահովադիրը կոնկրետ չի նշել, թե որ ժամանակաշրջանի եւ որ պարտավորության մարմանն է այն վերաբերում (նպատակային չէ), ապա առաջնահերթ մարվում են առկա սոցիալական վնասների պարտավորությունները հետևյալ հերթականությամբ՝ սոցիալական վնասի գումարները, տույժերը, տուգանքները:»:

2) 4-րդ բաժնի՝

ա. 4.1-րդ կետը «տույժ» բառից հետո լրացնել «եւ «Պարտադիր սոցիալական ապահովության վնասների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի երրորդ պարբերությունով սահմանված դեպքերում տուգանք» բառերով.

բ. 4.2-րդ կետը «տույժերը» բառից հետո լրացնել «(տուգանքները)» բառով.

գ. 4.3-րդ կետը «տույժեր» բառից հետո լրացնել «(տուգանքներ)» բառով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

23.12.2010
ՀՕ-182